ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<< 30 >> ապրիլի 2013թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝** Ա.Ադամյանը, Ա.Բաղրամյանը, Լ.Բարսեղյանը, Մ.Գաբոյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Եդիգարյանը, Գ.Թաթարյանը, Հ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Վ.Հունանյանը, Ռ.Մխիթարյանը, Ե.Պողոսյանը, Մ.Սահակյանը, Ա.Վարդանյանը

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը, Գ.Մալխասյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Հ.Սարգսյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, համայնքի ղեկավարի օգնական Ռ.Համբարյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Զ.Եգանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանը, ծրագրերի և վերլուծության բաժնի պետի ժ/պ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի ժ/պ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետի ժ/պ Ա.Դավթյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Ս.Մինասյանը

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը, ողջունելով համայնքի ավագանու անդամներին, ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ.

1. **ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 30-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

2. **ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Մայիսյան տոների կապակցությամբ արցախյան պատերազմում (1991-1994թթ.) զոհված ազատամարտիկների ընտանիքներին, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, արցախյան պատերազմի 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ ազատամարտիկներին, Գյումրի քաղաքից Հայրենական Մեծ պատերազմին մասնակից վետերաններին, 1956թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից վետերաններին Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից տրամադրել դրամական օգնություն:
2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինան-սատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ կատարել համապատասխան վճարումները Գյումրի համայնքի 2013թվականի բյուջեով նախատեսված 10/7/1 գործառնական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> 4729 տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 6000,0 հազար (վեց միլիոն) ՀՀ դրամ՝ հաջորդ ավագանու նիստին ներկայացնելով վճարված ցուցակները և փաստացի վճարված գումարի չափը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

3. **<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ> ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ <ԳՅՈՒՄՐԻ ՈՒԱՁ> ՍՊԸ-Ի ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 98 ԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ 144 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Ս.Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Զիջել <<Հայաստանի Կույրերի Միավորում>> հաշմանդամների հասարակական կազմակերպության <<Գյումրի ՈՒԱՁ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Գյումրի քաղաքի Ղուկասյան 98 և Մայակովսկու 144 հասցեներում գտնվող շենքերի և շինությունների 2013 թվականի գույքահարկի՝ 176000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) դրամ և հողի հարկի՝ 18746 (տասնութ հազար յոթ հարյուր քառասունվեց) դրամ գումարները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

4. **ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ԻՆ ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի ժ/պ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրու քաղաքապետարանի <<Համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը Գյումրու համայնքի 2013 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման <<Սպորտային նպաստներ բյուջեից>> 4727 տնտեսագիտական դասակարգման հոդվածից տրամադրել 1600,0 հազար (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց